


34

1h - 95



07 FEB 2010
EPOS 20505

34
Դ-95

423
113-իր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՅՖԱՌԵ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ



08 FEB 2010

ՈՈՒ-ՀԱՅԵՐԵՆ

ԻՐԱԿԻԱԲԱՆԱԿԱՆ

ԵԹԶԵԹՆ ԲՈՒՄՐԸՆ

100/
31968

Թիմլիս, 1919 թ.

24 JUL 2013

33.090

Յ ա ռ ա ջ ա բ ա ն

Այս բառարանը կազմուել է հաւաքական աշխատանքով, որի մեծագոյն մասը կատարել է երդուեալ հաւատտար Տիգրան Յովհաննիսեանը:

Գործի նախաձեռնութիւնը պատկանում է Թիֆլիսի „Հայփաստին“ (Հայ փաստաբանների միութեանը), որ ի նկատի ունենալով Հայաստանի դատարանների մօտակայ ազգայնացումը՝ դեռ անցեալ տարի վճռել էր հրատարակել ոռուհայերէն իրաւաբանական առձեռն բառարան։

Հրատարակելիք բառարանը, նախաձեռնողների դիտաւորութեամբ, մի կողմից պիտի առաջին քայլը լինէր ամենակարևոր օրէնսգրքերի հայերէն թարգմանութեան գործում և միւս կողմից պիտի հայերէնին անվարժ արևելահայ դատական պաշտօնեաններին ու փաստաբաններին հնարաւորութիւնն տար դնել ի սպաս հայ ժողովրդի իրենց իրաւաբանական հմտութիւնը։ Եւ քանի որ Հայաստանի դատարանների ազգայնացումը ցանկալի էր սկսել ներկայ 1919 թ. աշունըից, բառարանը պիտի տպագրութեան յանձնուէր այս ամառ։

Առաջադրուած նպատակը նախորոշում էր բառամթերքի կազմը և մասամբ նաև բառարանի ծաւալը։

Գործնական նպատակ ունեցող իրաւաբա-

նական բառարանի մէջ բնականօրէն պիտի
մտնէին գլխաւորապէս՝ դատավարութեան մէջ
յաճախ գործածուող բառեր, քաղաքացիական,
քրէական, առևտրական ու մուրհակային իրա-
ւունքին և քաղաքացիական ու քրէական դատա-
վարութեան վերաբերեալ տէրմիններ:

Բառարանի ծաւալը անշուշտ կախում պիտի
ունենար նաև „Հայփաստի“ տրամադրութեան
տակ եղող կարձ ժամանակից և նիւթական սուղ
միջոցներից (անդամավճարներից):

Գործը արագացնելու համար „Հայփաստի“
Բիւրօն ուսւերէն բառամթերքի ընտրութիւնը
յանձնեց իր անդամներից հինգին՝ աշխա-
տանքի հետեւեալ բաժանմամբ,—Արշակ Կու-
սիկեանին՝ քաղաքացիական օրէնքների, Յարու-
թիւն Զմշկեանին՝ քաղաքացիական դատավարու-
թեան, Գրիգոր Իւզբաշիանին՝ քրէական օրէնք-
ների, Յովսէփ Ամիրխանեանին՝ քրէական դատա-
վարութեան և Սարգիս Տէր-Մինասեանին՝ առե-
րական ու մուրհակային օրէնքների վերաբե-
րեալ տէրմինների ընտրութիւնը:

Յիշեալ երդուեալ հաւատարարները վերջաց-
րին իրենց ստանձնած աշխատանքները անցեալ
ուսւերէն տէրմիններից բաղկացած մի բառա-
մթերք, որի մէջ նրանք կարեոր էին համարել
մտցնել նաև մի շարք ոչ զուտ իրաւաբանական,

բայց օրէնքգլքերի այբբենական ցանկերում սու
վորաբար գետեղուող բառեր:

Ներկայ տարուայ յունվարի 15-ին „Հայ-
փաստի“ Բիւրօն բառարանի կազմումը յանձնեց
երդուեալ հաւատար Տիգրան Յովհաննիսեանին
հետևեալ պայմաններով:

Պատրաստի ոռւսերէն բառամթերքի մէջ
նա կարող էր որոշ փոփոխութիւններ մացնել
(բառեր հանել, նոր բառեր աւելացնել), բայց ի
վերջոյ տէրմինների ընդհանուր թիւը չպիտի
1400-ից աւելի լինէր, որպէս զի աշխատանքը
շատ չերկարէր և ծախսերը շատ չաւելանային:

Բառարանը պիտի պատրաստ լինէր տպա-
գրութեան համար ոչ ուշ քան ներկայ տարուայ
յուլիսի 1-ը և նախապէս պիտի քննուէր խմբա-
գրական մասնաժողովի կողմից, որի կազմի մէջ,
բացի իրենից՝ Տիգրան Յովհաննիսեանից, մրտ-
նում էին երկու հայագէտ՝ Ստեփան Մալխասեան
ու Մանուկ Աբեղեան և երեք իրաւաբան՝ Արշակ
Կուսիկեան, Յարութիւն Զմշկեան ու Ալէքսանդր
Պապովեան (վերջին երեքը, իբրև միութեան ան-
դամներ, իրենց ծառայութիւնը ձրիաբար զրել
էին „Հայփաստի“ արամադրութեան տակ):

Տիգրան Յովհաննիսեանը առաջին ամիսը
նուիրեց նախապատրաստական աշխատանքներին,
այն է՝ իրաւաբանական ու լեզուաբանական աղ-

բիւրների, ուսումնասիրութեան և ոռուսերէն բառամթերքի փոփոխման:

Այնուհետև՝ փետրվարի 15-ից ի վեր՝ սկսեց մասառմաս կազմել և խմորատիպին յանձնել բառարանի սեագիրը, որ վերջացրեց մայիսի 14-ին:

Խմորատիպով հանուած օրինակները նախօք ուղարկուում էին մասնաժողովի անդամներին և սեագիրը մասառմաս քննուում էր մասնաժողովի նիստերում, որոնցից առաջինը կայացաւ փետրվարի 22-ին, իսկ վերջինը՝ յունիսի 14-ին։ Այդ ժամանակամիջոցում մասնաժողովն ունեցաւ ընդամենը 35 նիստ՝ իրաքանչիւրը մօտ 4 ժամ տևողութեամբ։

Մասնաժողովի իրաւաբան անդամներից Յառութիւն Զմշկեանը կարողացաւ մասնակցել միայն երկու-երեք նիստի, որովհետև շուտով հրաւիրուեց Հայաստան իրաւութեան մինիստրի օգնականի պաշտօնով։ Միւս իրաւաբան անդամ Ալէքսանդր Պապովիեանն էլ հնարաւորութիւն ունեցաւ մասնակցել միայն մի շարք նիստերի։ Մնացեալ անդամները՝ Տիգրան Յովհաննիսեան, Մտեփան Մալխասեան, Մանուկ Աբեղեան և Արշակ Կուսիկեան՝ մասնակցեցին բոլոր 35 նիստերին։

Մասնաժողովի աշխատանքները կատարուում էին հետեւեալ կերպով։

Նախ և առաջ Տիգրան Յովհաննիսեանը կարդում էր մի ամփոփ զեկոյց հերթական իրաւաբանական տէրմինի իմաստի մասին։ Այնուհետև Արշակ Կուսիկեանը լրացնում էր նրա զեկոյցը մանրամասն բացատրութիւններով, որ յաճախ լուսաբանում էր իր գրադարանի իրաւագիտական գրքերի համապատասխան հատուածների ընթերցումով (նիստերը կայանում էին իր բնակարանում)։

Երբ տէրմինի իմաստը այդպիսով բոլորովին ճշտուում էր և պարզուում մասնաժողովի հայագէտ անդամների համար, Տիգրան Յովհաննիսեանը բացատրում էր, թէ ինչ աղբիւրներից է քաղել այդ տէրմինի դիմաց դրած հայերէն բառը կամ բառերը, ինչպէս է թարգմանուած այդ տէրմինի Փրանսերէնը՝ Նուպարեանի, Լուսինեանի, Մ. վ. Քաջունու, Նորայրի և Տէմիրճիպաշեանի ֆրանս-հայերէն բառարաններում կամ գերմաններէնը Կոյլաւի գերմանահայերէն բառարանում, ինչ բառ չի մտցրել սեագրի մէջ իբր իր կարծիքով բոլորովին անընդունելի, ինչ բառ է առհասարակ մոռացել մտցնել և նոր է առաջարկում, առաջարկած բառերից որը և ինչու է գերադասելի համարում, ինչ հին բառեր և ինչ հիմունքով է առաջարկում կրկին գործածութեան մէջ մտցնել իբր հին կամ մի նոր իմաստով՝ փոփոխած կամ անփոփոխ ձևով և վերջապէս ինչ

նոր բառ է ինքը կաղմել և ինչ հիմունքով ու որ բառերի համանմանութեամբ (այդ բացատրութիւնների մի մասը երբեմն տպուած էր լինում մասնաժողովի անդամներին ուղարկուած օրինակներում):

Սյնուհետաև սկսուում էր մասնաժողովի ըննական աշխատանքը: Մտքերի փոխանակութիւնից յետոյ մեծ մասամբ անփոփոխ ընդունուում էին սևազըրի մէջ առաջարկուած մի հատիկ բառերը կամ ընտրութիւն էր կատարուում մէկից աւելի առաջարկուած բառերից: Սակայն մի շարք գէպքերուում ըոլոր առաջարկուած բառերն էլ մերժուում էին և նոր առաջարկներ էին լինում Ստեփան Մալխասեանի ու Մանուկ Աբեղեանի, ինչպէս նաև Տիգրան Յովհաննիսեանի կողմից, երբ մասնաժողովը այդ նոր առաջարկների նկատմամբ էլ համաձայնութեան չէր յանդում, հարցը յետաձգուում էր մինչև երկրորդ ընթերցանութիւն, որ տեղի էր ունենուում մի քանի տասի քննութիւն վերջացնելուց յետոյ: Եթէ երկրորդ ընթերցանութեան ժամանակ էլ համաձայնութիւն չէր կայանում, հարցի լուծումը թողնուում էր երրորդ ընթերցանութեան, որ տեղի ունեցաւ ամբողջ բառարանը պատրաստելուց յետոյ:

Այդ կրկնակի ընթերցանութիւնների միջացին կարդացուում էին ոչ միայն վիճելի, այլ և

բոլոր բառերն անխտիր, այնպէս որ ամբողջ բառարանը քննութեան ենթազկուեց երեք անգամ և մասնաժողովի անդամները համաձայնութեան եկան ամբողջ բառամթերքի նկատմամբ, բացառութեամբ մի քանի բառերի, որոնք ընդունուեցին ձայնների մեծամասնութեամբ:

Կարելի է ասել, չկայ բառարանում մի տէրմին, որ ենթարկուած չինի մասնաժողովի բազմակողմանի ու մանրակրկիտ իրաւաբանական ու լեզուաբանական վերլուծութեան և որի առթիւ հէնց մասնաժողովի նիստում մի աւելյորդ անգամ թերթուած վիճեն «Հայկազեան լեզուի նոր Բառզըրի» ստուար հատորները:

Ստեփան Մալխասեանը և Մանուկ Աբեղեանը, նախօրօք ձեռքի տակ ունենալով սեպքը օրինակները, բերում էին նիստերին հիմնաւորուած նկատողութիւններ և պատճառաբանուած առաջարկներ: Կան մօտ հարիւր բառեր, կէսից աւելին նոր տէրմիններ, որոնք ընդունուած են նրանցից մէկի կամ միւսի առաջարկով:

Նոր տէրմիններ—նորաբանութիւններ (նոր բարդուած կամ ածանցուած բառեր), նորաձեռնութիւններ (գործածական բառերի կրծատումներ և առհատարակ ձևափոխութիւններ) և հնաբանութիւններ (հին բառերի վերականգնումն հին կամ նոր առումով, անփոփոխ կամ փոփոխած ձևով)

—բառարանում կան աւելի քան երեք հարիւր վաթսուն հատ, որից մի քանի տասնեակը բառի բուն իմաստով միացեալ աշխատանքի արդիւնք է: Այդ մօտ վաթսուն տէրմինները Մ. Աբեղեանը, Տ. Յովհաննիսեանը և Ս. Մալխասեանը, երկ—երկու կամ երեմն երեքով, կազմել կամ գտել են ընդհանուր ոյժերով հէնց նիստերի ընթացքում,—մէկը առաջարկել է այն ուղին, որով պիտի ընթանալ, կամ այն ելակէտը, որից պիտի մեկնել, համապատասխան բառը կազմելու կամ գտնելու համար, միւսը կազմել կամ գտել է բառը, երբեմն էլ երրորդի առաջարկով որոշ փոփոխութիւն է մտցուել մէջը և ստացուել է որոնած տէրմինի վերջնական ձևը: Մնացեալ մօտ 250 նոր տէրմինը եղել է սևագրում կամ նիստերի ընթացքում է առաջարկուել Տ. Յովհաննիսեանի կողմից:

Մասնաժողովի անդամ Արշակ կուսիկեանը, թէև հայերէնին անհմուտ, նոյնպէս որոշ մասնակցութիւն է ունեցել հայերէն բառերի ընտրութեան մէջ, իր կարծիքն յայտնելով զլիսաւորապէս նրանց անախորժալուր կամ դժուար արտասանելի և ուրեմն դժուար իւրանալի լինելու մասին, իսկ այդ իր նշանակութիւնն ունէր, քանի որ սկզբում հէնց ալդպիսի իրաւաբաններ պիտի կիրառէն բառարանը չայստանի ազգայնացած դատարաններում:

Մասնաժողովի անդամ Ալ. Պալովեանը՝ երբ ներկայ է եղել նիստերին՝ մասնակցել է բառերի և իրաւաբանական և լեզուաբանական քննութեանը:

Մենք այսքան կանգ առանք բառարանի կազմումի մանրամասների վրայ զլիսաւորապէս այն պատճառով, որ այն ժամանակից ի վեր, երբ անկախ Հայաստանում օրուայ խնդիր է դարձել բոլոր պետական հիմնարկների ազգայնացումը, սա բառարան կազմելու առաջին փորձն է: Նոյնպիսի միտք ծագել է նաև ուրիշ մասնագիտութիւնների հայ ներկայիշների մէջ, որոնց մեր անցած ուղին՝ կարծում ենք՝ կարող է որոշ ցուցմունքներ տալ:

Բացի այդ՝ սա մի հազուագիւտ օրինակ էր հաւաքական մտաւոր աշխատանքի, և մեզ թւում էր, թէ մենք պարտական ենք հանրութեան քննադատութեանը առաջարկել մեր աշխատանքի ոչ միայն արդիւնքը, այլ և մէթօդը:

Կարծում ենք, անօգուտ չի լինիլ պարզել և այն սիստէմը, որին հետեւ ենք բառընտրութեան միջոցին:

Ուսւսերէն տէրմինի դիմաց որևէ հայերէն բառ գնելիս՝ մեր առաջին հոգմն եղել է այն, որ հայերէն բառը ամենայն ճշտութեամբ արտայայտի ուռւսերէնի իմաստը:

Այդպիսի բառ նախ և առաջ վնարել ենք

Ի հարկէ գործածական բառերի մէջ և միմիայն այն դէպքում, երբ այդպիսի բառ չենք գտել, զիմել ենք գաւառաբարբառների և հին հայերէնի օգութեան։ Հին հայերէնից օգտուել ենք լիաբուռն և ի միջի այլոց ի կեանս ենք վերակոչել այնպիսի քիչ գործածական ձեեր, ինչպէս «վարութիւն», «իրաւութիւն» և այլն (փոփոխած կամ անփոփոխ առումով)։

Երբ մեր որոնումները ի գերև են ելել, օտարազգի տէրմին ենք ընդունել՝ զլիաւորապէս այնպիսիներից, որոնք գործածական են զրեթէ բոլոր եւրոպական լեզուներում, և կամ նոր բառ ենք կազմել, հետեւելով մեր հին ու նոր լեզուների օրէնքներին և ձգտելով առատօրէն օգտագործել նախդիրները, որոնք այնքան մեծ դեր են կատարում ոռուսերէնում ու կատարել են հին հայերէնում և որոնց յետագայ քարացումը՝ երբեմն այնքան անզօր է դարձնում մեր միւս կողմերից հարուստ նոր լեզուն։

Օտարազգի բառեր ընդունելիս մեզ զբաղեցրել է նրանց հայերէնացնելու ձեւը, բանի որ արևմտահայերը Փրանսերէն ձևով են իւրացնում այդպիսի բառեր, իսկ արևելահայերը՝ լատինական (երբեմն ոչ զուտ, այլ ոռուսացրած) ձևով։ Որոշ տատանումներից յետոյ մենք վճռեցինք հետևել արևելահայ սիստէմին, հարցի վերջնական լուծումը թողնելով Միացեալ

Հայաստանի ապագայ Ակադէմիային, որ անշուշտ երկուստեք ընդունելի մի ձև կը գտնի։

Նոր հայերէնի պակասութիւններից մէկն էլ բառերից շատերի չափազանց երկարութիւնն է, ուստի մեր հոգսերից մէկն էլ եղել է բառերին կրծատ ձև տալը կամ նրանց կրծատ ձևերի վերականգնումը։

Բառեր ընտրելիս, կրծատելիս կամ կազմելիս մենք առանձին ուշադրութիւն ենք դարձրել նաև նրանց գեղեցկութեան վրայ։

Այսուհետեւ՝ մենք խուսափել ենք մի քանի ոռուսերէն տէրմին միւնոյն հայերէն բառով թարգմաննելուց, իհարկէ հնարաւորութեան սահմաններում, որպինետեւ չկայ ոչ մի լեզու, որ ամեն մի օտար բառի համար առանձին բառ ունենայ։

Որուսերէն բառերը թարգմանելիս մենք իհարկէ ի նկատի ենք ունեցել առհասարակ նրանց իրաւաբանական իմաստը և սակաւաթիւ դէպքերում միայն նաև նրանց ոչ գուտ իրաւաբանական առումները։

Մենք աշխատել ենք ամեն մի ոռուսերէն տէրմինի կամ եթէ նա մի քանի իմաստ ունի՝ ամեն մի առումի դիմաց դնել միմիայն մի հայերէն բառ և շատ սակաւաթիւ դէպքերում երկու համանիշներ ու երբէք աւելի. դրանով մենք ձգտել ենք նպաստել հայերիս մէջ բառե-

իր ճիշտ ըմբռնման և ճիշտ կիրառման գործին։
Համանիշ բառերը իրարից բաժանել ենք
ստորակէտով, իսկ տարբեր իմաստ արտայայ-
տողները՝ թուանշաններով։

Մի բառի դիմաց դրուած երկու համանիշ
բառերից մէկը շատ դէպքերում օտարազգի
բառ է։ Այդ այն դէպքերն են, երբ մասնաժո-
ղովի անդամները օտարազգի բառը գերադասե-
լի են համարել հայերէնից, թէև հայերէնն էլ
բոլորովին անընդունելի չեն համարել, և կամ
թէպէտ հայերէնը գերադասելի են համարել,
սակայն չեն վստահացել բառարանի մէջ չը մտ-
ցնել հասարակութեան մէջ լայն ընդունելութիւն
գտած օտարազգի բառը։ Երկու դէպքումն էլ
օտարազգի բառը հայերէնից առաջ է դրուած,
իսկ վերջնական ընտրութիւնը կեանքի փորձին
է թողնուած։

Ինչ վերաբերում է ուղղագրութեան, մենք
կողմանից ենք նրա պարզացման, սակայն այդ
հարցի լուծումն էլ Հայկական Ակադէմիայի իրա-
ւասութեանը վերապահուած համարելով, մենք
բառարանը տպագրութեան ենք յանձնում հին
հայերէն ուղղագրութեամբ, շեղուելով նրա կա-
նոններից («վ» և «օ» տառերի նկատմամբ) մի-
այն օտար բառերի գրութեան մէջ, հին ՄիՒ-
թարեանների օրինակով։

Այդպէս են եղել մեր աշխատանքի ուղին

ու եղանակը և մեր ձկտումները։

Ինչ արդիւնք են տուել նրանք՝ թող ուրիշ-
ները դատեն։

Մենք շատ լաւ զգում ենք իհարկէ, որ
մեր բառարանը զերծ չէ թերութիւններից, և
հրաշք կը լինէր, եթէ հայ լեզուի արդի վիճա-
կում, կեանքի այժմեան պայմաններում և մեզ
տուած կարձ ժամանակամիջոցում մենք կարո-
ղանայինք մի անթերի բառարան կազմել։

Հայերէն իրաւաբանական բառարան կազ-
մելը նշանակելի չափով ստեղծագործական մի
աշխատանք է, որովհետև ոչ միայն մեր արդի
լեզուն առհասարակ դեռ կազմակերպման ու
մշակման փուլի (Փազիսի) մէջ է գտնուում,
այլ որ աւելի ևս կարևոր է՝ նոր հայերէնը մին-
չև այժմ բնաւ չի ունեցել իրաւագիտական
տէրմինոլոգիա, իսկ հին հայերէնը շատ աղքատ
է այդ կողմից (իրաւաբանական տէրմինները
սակաւաթիւ են, եղածներից շատերն էլ անորոշ
առումով են գործածուել կամ չեն ձշտուած)։

Գործի դժուարութիւնը աւելացնում էր
այն հանգամանքը, որ հաղորդակցութեան այժ-
մեան քառային վիճակում անհնար էր ձեռք
բերել հայերէն առանց այն էլ սակաւաթիւ
իրաւաբանական ինքնուրոյն ու թարգմանական
աղբիւրներից շատերը, ինչպէս օրինակ «Անոիզք
Անտիոքայ», «Օրէնք թագաւորաց», «Օսմա-

նեան օրէնքները» և այլն:

Նոյն իսկ անկախ այդ անհպատ պայմաններից, կազմել մի մասնագիտական թէկուզ և առձեռն բառարանի սեագիր չորս ամսում և վերջնական ձեւ տալ այդ սեագրին երեսուն և հինգ նիստի ընթացքում—կարելի էր միայն ոյժերի գերագոյն լարումով և անյետաձգելի դործի հրամայական պահանջով:

Մենք ժամանակ չունեցանք ստուգելու մեր կազմած բառարանը մի քանի կամ գէթ մի օրէնսգրքի թարգմանութեամբ, մինչդեռ ուրիշ լեզուների նմանօրինակ բառարանները կազմուել են այն ժամանակ, երբ տուեալ լեզուով արդէն գոյութիւն է ունեցել իրաւաբանական ինքնուրոյն ու թարգմանական գրականութիւն:

Բառարանի սեագիրը կազմելիս և խմբագրական նիստերում մենք օգտուել ենք այն բոլոր իրաւագիտական ու լեզուաբանական աղբիւրներից, որ ներկայ պայմաններում կարող էին ձեռքի տակ ունենալ մի մասնաւոր հիմնարկի հրաւերով աշխատող մարդիկ:

Այդ աղբիւրներից գլխաւորներն են 1) «Դատաստանագիրը հայոց», Միխար Գօշի. 2) «Նոր Բառգիրք Հայկագեան լեզուի». 3) «Առձեռն բառարան Հայկագեան լեզուի». 4) «Նոր Բառգիրք հայերէն լեզուի», Սիմ. Գաբամեանի. 5) «Հայերէն գաւառական բառարան», Հ. Աճառեանի.



- 6) «Հայոց բառ ու բան», Մ. Առաքելյան. 7) «Ժողովածոյ առակաց Վարդանայ. 8) «Բառգիրք արուեստից և գիտութեանց և զեղեցիկ դպրութեանց», Մ. վ. Քաջունու. 9) «Բառգիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն», Նորայր Բիւզանդացու. 10) «Նոր Բառգիրք Փրանսահայ», Գուլիդոն Լուսինեանի. 11) Բառարան Փրանսերէնէ հայ աշխարհիկ», Մեսրոպ Նուպարեանի. 12) «Բառարան Փրանսերէնէ հայերէն», Ե. Տէմիրճիպաշեանի. 13) «Բառգիրք գերմաներէն-հայերէն», Աւետիք վ. Կոյլաւի. 14) «Словарь юридическихъ и государственныхъ наукъ», А. Ф. Волкова и Ю. Д. Филиппова. 15) «Латинско-русский словарь», Т. Дыдинского. 16) «Учебникъ гражданского процесса», Е. В. Васьковскаго. 17) «Гражданское Уложение». 18) «Курсъ русского уголовного права», Ал. Лохвицкаго. 19) «Русское гражданское право», Д. И. Мейера. 20) «Курсъ гражданского права», К. Побѣдоносцева. 21) «Сводъ законовъ Российской Имперіи». 22) «Русское уголовное право», Н. Д. Сергеевскаго. 23) «Курсъ уголовного права», И. Я. Фойницкаго. 24) «Курсъ уголовного судопроизводства», И. Я. Фойницкаго. 25) «Торговое право», П. П. Цитовича. 26) «Курсъ торгового права», Г. Ф. Шершеневича. 27) «Учебникъ русского граж-

данского права», Г. Ф. Шершеневича. 28)
«Dictionnaire des termes du droit». 29) Traité élémentaire d'organisation judiciaire, de compétence et de procédure», Henry Bontils. 30)
«Code civil».

Կրկնում ենք, մենք նախատեսում ենք մեր բառարանի հնարաւոր թերութիւնները և գիտենք, որ սա մի նախափորձ է միայն, որին հետևելու են անշուշտ աւելի ու աւելի կատարեալ գործեր:

Արինք՝ ինչ որ կարող էինք:

Խմբագրական Մասնաժողով,
Թիֆլիս
14 յունիսի 1919 թ.

«Հայփաստի» կողմից

«Ռուս-հայերէն իրաւաբանական առձեռն բառարանը» արդէն ուղարկում էինք տպարան, երբ Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւնը իրաւութեան Մինիստր Յարութիւն Զմշկեանի միջոցով մեզ յայտնեց, թէ ինըը ստանձնում է մեր բոլոր ծախքերը բառարանի հրատարակութեան համար:

Պարտք ենք համարում մեր խորին շնորհակալութիւնը յայտնել Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեանը, որ վճռել է օժանդակութիւն տալ մեզ նաև մեր ուրիշ իրաւաբանական հրատարակութիւնների համար:

«Հայփաստի» բիւրո

Նախագահ՝

Արշակ Բարխուդարեան
Փոխնախագահ՝

Գրիգոր Իւզբաշեան
Անդամներ՝

Արշակ Կուսիկեան
Ռուբէն Յովհաննիսեան
Յովսէփ Ամիրխանեան
Ալէքսանդր Պապովեան
Սարգիս Տէր Մինասեան

Թիֆլիս

30 յունիսի 1919 թ.

А.

Авансъ	Ավանս, Կանխավճար
Аварія	Ավարիա, Ծովավթար
Автономія	Ինքնօրինութիւն
Авторское право	Հեղինակային իրաւունք
Агентъ	Գործակալ
Адатъ	Ադաթ
Адвокатъ	Փաստաբան
Административный	Վարչական
Администраторъ	Վարիչ
Администрація	Վարչութիւն
Администрація по торговымъ дѣламъ	Առևտրական գործերի վարչութիւն
Азартная игра	Բախտախաղ

Актовая книга	<i>Ակտագիրք</i>
Актовый сборъ	<i>Ակտատուրք</i>
Актъ	<i>Ակտ</i>
Актъ о протестѣ	<i>Բողոքի ակտ</i>
Акцептантъ	<i>Հնդունիչ</i>
Акцептация	<i>Հնդունումն</i>
Акцептъ	<i>Հնդունումն</i>
Акцизъ	<i>Բաժ</i>
Акционерное общество	<i>Բաժնետիրական ընկերութիւն</i>
Акционеръ	<i>Բաժնետէր</i>
Акція	<i>Բաժնեթուղթ</i>
Алиби	<i>Ալիբի, Այլուր</i>
Алименты	<i>Ապրուստ</i>
Аллонжа	<i>Ալօնժ</i>
Альтернативный	<i>Երկնտրական</i>
Аналогія	<i>Համանմանութիւն</i>

Апелляторъ	<i>Ապէլատօր, Առկոչաւոր</i>
Апелляционная жалоба	<i>Ապէլացիօն, Առկոչային գանգաւ</i>
Апелляционная инстанция	<i>Ապէլացիօն ինստանցիա, Առկոչային ատեան</i>
Апелляционный протестъ	<i>Ապէլացիօն, Առկոչային բողոք</i>
Апелляция	<i>Ապէլացիա, Առկոչ</i>
Арбитражъ	<i>Իրաւարք</i>
Арбитръ	<i>Իրաւարար</i>
Аренда	<i>Վարձկալութիւն</i>
Арендаторъ	<i>Վարձակալ</i>
Арендная плата	<i>Վարձագին</i>
Арендный договоръ	<i>Վարձադաշն</i>
Арестантъ	<i>Կալանաւոր</i>
Арестъ личный	<i>Կալանիք</i>
Арестъ	<i>Արգելանկ</i> имущества

Артель	<i>Արտել</i>
Артельщикъ	<i>Արտելառոր</i>
Архиваріусъ	<i>Արխիվարիուս</i>
Архивъ	<i>Արխիվ</i>
Ассигновка	<i>Ասիգնանք, Ձատկացումն</i>
Атtestатъ	<i>Վկայագիր</i>
Аукціонъ	<i>Աճուրդ</i>
Аффектъ	<i>Աֆֆէկտ</i>

— о —

Б.

Բազար

Багажъ	
Банкнотъ	
Банковый билетъ	<i>Բանկատումն</i>
Банкротство	<i>Բանկրօտութիւն</i>
Банкротъ	<i>Բանկրօտ</i>
Банкъ	<i>Բանկ</i>
Барщина	<i>Կոռ</i>

Безбрачіе	<i>Անամուսնութիւն</i>
Безбрачіе духовенства	<i>Կուսակրօնութիւն</i>
Безвестное отсутствие	<i>Անհետ բացակայութիւն</i>
Безграмотный	<i>Անգրագէտ</i>
Безденежность	<i>Անփողութիւն</i>
Безденежный	<i>Անփող</i>
Бездействие власти	<i>Իշխանութեան անգործութիւն</i>
Безмездное пользование	<i>Անվարձ օգտումն</i>
Безнаказанность	<i>Անպատճութիւն</i>
Безнравственность	<i>Անբարոյութիւն</i>
Безоборотная надпись	<i>Այետաղարձ մակագիր</i>
Безпамятство	<i>Անյուշութիւն</i>
Безпаспортный	<i>Անանցողիր</i>
Безповоротность	<i>Անդարձութիւն</i>

Безпорядки	Անկարգութիւն
Безпрерывность	Անընդհատութիւն
Бесспорных требований	Անվիճելի պահանջներ
Бессрочный	Անէտիկ
Безуміе	Հաշմամտութիւն
Безумный	Հաշմամիտ
Безчестіе	Պատուագին
Береговой владелецъ	Ափնատէր
Беременность	Յղիութիւն
Бечевникъ	Նաւաքաշը
Биржа	Բօրսա
Биржевая игра	Բօրսախաղ
Благопріобрѣтенное имущество	Իւրաստաց դյր
Бланковая надпись	Բլանկային, Սուկմակագիր
Бланкъ	Բլանկ, Սուկիկ

Богохуление	Աստուածանարգումն
Бодмерея	Բօդմէրէ, Նաւագրաւ
Бойкотъ	Բօյկօտ
Боковая линія	Կողմանագիծ
Бракоразводный	Ամուսնալուծական
Бракъ	Ամուսնութիւն
Брачное свидѣтельство	Ամուսնական վկայագիր
Брачный договоръ	Ամուսնագաղն
Бремя доказыванія	Ապացուցման բեռ
Бродяга	Թափառաշրջիկ
Буйное помѣшательство	Մոլեգին խելացնորութիւն
Буйство	Խժութիւն
Бунтъ	Ստամբակութիւն
Бѣшенство	Կատաղութիւն

B.

Вакантное наследство	<i>Թափուր ժառանգութիւն</i>
Вакуфъ	<i>Վակուֆ</i>
Валюта	1.— <i>Փոխարժեք</i> 2.— <i>Արժանք</i>
Вводъ во владѣніе	<i>Մուծումն ի տիրութիւն</i>
Веденіе дѣла	<i>Գործի վարումն</i>
Векселедатель	<i>Մուրհակատու</i>
Векселодержатель	<i>Մուրհակակալ</i>
Векселеспособность	<i>Մուրհակունակութիւն</i>
Вексель	<i>Մուրհակ</i>
Вексель простой	
Вексель переводный	<i>Փոխանակագիր</i>
Вексель на себя	<i>Փոխանակագիր իր վրայ</i>
Вексель по востребованію	<i>Մուրհակ առ պահանջ</i>
Вексель по обычаю	<i>Սովորոյթի, մուրհակ</i>

Вексель собственному приказу	<i>Փոխանակագիր իր հրամանին</i>
Вексель срокомъ по предъявленію	<i>Մուրհակ, Փոխանակագիր ի սոյց (վճարելի)</i>
Вексельная надпись	<i>Մուրհակի, Փոխանակագրի մակագիր</i>
Вердиктъ	<i>Վէրդիկտ</i>
Вещественное доказательство	<i>Իրեղն ապացոյց</i>
Вещное право	<i>Իրային իրաւունք</i>
Вещь	<i>Իր</i>
Взаимное согласие	<i>Փոխադարձ համաձայնութիւն</i>
Взаимный кредитъ	<i>Փոխադարձ վարկ</i>
Взломъ	<i>Կոտրանք</i>
Взносъ	<i>Մուծանք</i>
Взносъ членскій	<i>Անդամագնար</i>
Взрывчатыя вещества	<i>Պայթուցիկ նիւթեր</i>

Взыскание	1.—Բոնագանձումն 2.—Տոյժ
Взыскание податей	Հարկահանութիւն
Взыскатель	Բոնագանձող
Взыскатель податей	Հարկահան
Взятіе подъ стражу	Զերբարկութիւն
Взятки	Կաշառք
Взять на прокатъ	Բանուզովի վերցնել
Видъ на чужой дворъ	Տես ուրիշի բակի փրայ
Вина	Մեղ(բ)
Виндикація	Վինդիկացիա, Իրախնդրութիւն
Виновность	Մեղաւորութիւն
Винокуреніе	Օղեհանութիւն
Вкладной билетъ	Դրոյքատումն
Вкладчикъ	Դրոյքատու
Вкладъ	Դրոյք

Вкладъ на вѣчныя времена	Մշտնջենական գրութ
Владѣлецъ	Տիրող
Владѣніе	Տիրութիւն
Владѣльческая земля	Տէրունի հող
Владѣльческій искъ	Տիրողական հայց
Власть родительская	Ծնողական իշխանութիւն
Вмѣненіе	Մեղսադրումն
Вмѣняемость	Մեղսունակութիւն
Внутреннее убѣжденіе	Ներքին համոզումն
Внушеніе	Խրատ
Внѣбрачные дѣти	Արտամուսնական զաւակներ
Внѣземельность	Արտերկութիւն
Внѣсудебный	Արտադատ
Вовлеченіе	Զառածումն
Водопой	Ջրարբ

Военная добыча	<i>Թաղմաւար</i>
Военная служба	<i>Զինուորական ծառայութիւն</i>
Военнопленный	<i>Թաղմագերի</i>
Военнослужащий	<i>Զինուորական պաշտօնեաց</i>
Военный советъ	<i>Զինուորական խորհուրդ</i>
Военный судъ	<i>Զինուորական դատարան</i>
Возбуждение уголов- наго преслѣдованія	<i>Քրէական հետապնդման յարուցումն</i>
Возвращение чужой вещи	<i>Օտարապատկան իրի վերադարձումն</i>
Воздушное пространство	<i>Օդային տարածութիւն</i>
Воззвание	<i>Կոչ</i>
Возмущение	<i>Խոռվութիւն</i>
Возмѣщеніе	<i>Հատուցումն</i>
Вознагражденіе	<i>Վարձատրութիւն</i>
Вознагражденіе за находку	<i>Գտնողչէք</i>

Возникновеніе	<i>Ծագումն</i>
Возобновленіе	<i>1. —Վերսկումն 2. —Վերանորոգումն</i>
Возраженіе	<i>Առարկութիւն</i>
Возрастъ	<i>Տարիք</i>
Возстаніе	<i>Ապստամբութիւն</i>
Возстановленіе на- рушенного владѣнія	<i>Խախտուած տիրութեան վերականգնումն</i>
Возстановленіе срока	<i>Կէտիկի վերականգնումն</i>
Воинская повинность	<i>Զինուորական պահպանութիւն</i>
Волеизъявление	<i>Կամայայտումն</i>
Вопросный листъ	<i>Հարցաթերթ</i>
Воспитательно—ис- правительное заве- деніе	<i>Դաստիարակ—ուղղիչ հիմնարկ</i>
Воспрещеніе	<i>Արգելումն</i>
Восходящая линія	<i>Վերել գիծ</i>
Вотчина	<i>Հայրունիք</i>

Вотчинное право	<i>Հայրունի իրաւունք</i>
Вредъ и убытки	<i>Վնաս ու կորուստ</i>
Временное владѣніе	<i>Ժամանակաւոր տիրութիւն</i>
Временное отсутствие	<i>Ժամանակաւոր բացակառութիւն</i>
Временное пребываніе	<i>Ժամանակաւոր կեցութիւն</i>
Времяисчислѣніе	<i>Տոմար</i>
Врученіе повѣстки	<i>Ծանուցագրի ընձեռումն</i>
Встрѣчное апелляционное требование	<i>Հակընդդէմ ապէլացիօն, առկոչային պահանջ</i>
Встрѣчный искъ	<i>Հակընդդէմ հայց</i>
Вступленіе во владѣніе	<i>Մուտ ի տիրութիւն</i>
Вступленіе въ дѣло	<i>Միջամտումն ի գործ</i>
Вступленіе въ законную силу	<i>Մուտ յօրինական ոյժ</i>
Вступщикъ	<i>Միջամտող</i>

Вторичное требование	<i>Կրկնապահանջ</i>
Выговоръ	<i>Յանդիմանութիւն</i>
Выгода	<i>Շահ</i>
Выгонъ	<i>Նախրատափ</i>
Выдача по завѣщанію	<i>Տացք ըստ կտակի</i>
Выдача преступника	<i>Յանցաւորի յանձնումն</i>
Выдѣлъ	<i>Բաժնեմորումն</i>
Выемка	<i>Հանոյթ</i>
Вызовъ	<i>Եկակոչ</i>
Выкидышъ	<i>Վիժուկ</i>
Выкупъ	<i>Փրկանք</i>
Вымогательство	<i>Կորզումն</i>
Выморочное имущество	<i>Անժառանգ գոյր</i>
Вымыщенная сдѣлка	<i>Հնարուի գործարք</i>
Выписка	<i>Քաղուածք</i>

Выпись	<i>Արտագիր</i>
Выселение	<i>Վտարումն</i>
Высылка	<i>Տարագրումն</i>
Выходъ на чужой дворъ	<i>Ելք ուրիշի բակի վրայ</i>
Вычетъ	<i>Բարձումն</i>
Вѣдомство	<i>Վերադիտութիւն</i>
Вѣритель	<i>Վարկառու</i>
Вѣчное и потомственное владѣніе	<i>Յաւէրժու ու ժառանգական տիրութիւն</i>

—о—

Г.

Галла	<i>Ղալս</i>
Генеральное межеваніе	<i>Ընդհանուր ծրումն</i>
Гербовая бумага	<i>Դրույթ</i>
Гербовая марка	<i>Դրույթանիշ</i>
Гербовый сборъ	<i>Դրույթատուրը</i>

Гербовый штрафъ	<i>Դրույթատուգանք</i>
Гипнозъ	<i>Հիպնոզ</i>
Гласность	<i>Հրապարակայնութիւն</i>
Глухонѣмой	<i>Խուլ ու համբ</i>
Голосование судей	<i>Դատաւորների ձայնագույնութիւն</i>
Гонораръ	<i>Հօնորար</i>
Горный уставъ	<i>Հանքային կանոնագիրը</i>
Городовое положеніе	<i>Քաղաքային կանոնագիրը</i>
Городской судья	<i>Քաղաքային դատաւոր</i>
Государственная казна	<i>Պետական գանձ</i>
Государственная собственность	<i>Պետական սեփականութիւն</i>
Грабежъ	<i>Կողոպուտ</i>
Гражданская правоспособность	<i>Քաղաքացիական իրաւունակութիւն</i>
Гражданская смерть	<i>Քաղաքացիական մահ</i>

Гражданский искъ *Քաղաքացիական հայց*

Гражданский судъ *Քաղաքացիական դատարան*

Гражданское право *Քաղաքացիական իրավունք*

Граница *Սահման*

Границы споръ *Սահմանավեճ*

Грузовая роспись *Տես* Коносаментъ

Грузоотправитель *Բեռնափար*

Грузополучатель *Բեռնատագ*

Грузъ *Բեռ*

— о —

Д.

Давностное владѣніе *Վաղեմական տիրութիւն*

Давностный срокъ *Վաղեմութեան կէտիկ*

Давность *Վաղեմութիւն*

Данная крѣпость *Տուշծոյ յետկար*

Дареніе *Ընծայում*

Даритель *Ընծայատ*

Дарственная запись *Ընծայագիր*

Дарь *Ընծայ*

Дата *Թուժեան*

Дача *Հողան*

Движимое имущество *Շարժական գոյր*

Движимость *Շարժունիք*

Двоебрачіе *Երկամունութիւն*

Двоеженство *Երկնութիւն*

Дворовое мѣсто *Բակատեղ*

Дворянинъ *Ազնուական*

Двухсторонній договоръ *Երկողմանի դաշինք*

Денежное взысканіе *Դրամական տոյժ*

Депозитъ *Աւանդ*

Держатель *Կալող*

Дивидендъ *Դիվիդենդ, Շահարաժին*

Дискреционная власть	<i>Կամակար իշխանութիւն</i>
Диспозитивный	<i>Տրամադրական</i>
Дисциплинарная власть	<i>Դիսցիպլինար իշխանութիւն</i>
Дисциплинарное взыскание	<i>Դիսցիպլինար տոյժ</i>
Дисциплинарное производство	<i>Դիսցիպլինար վարութիւն</i>
Диффамация	<i>Անուանարկութիւն</i>
Дляющееся нарушение <i>Տևական խախտում</i>	
Дляющееся преступление	<i>Տևական յանցանք</i>
Добровольное соглашение	<i>Յօժարակամ համաձայնումն</i>
Добросовѣстное владѣніе	<i>Բարեմիտ տիրութիւն</i>
Добросовѣстность	1. — <i>Բարեմտութիւն</i> 2. — <i>Բարեխղճութիւն</i>
Добыча	<i>Աւար</i>

Доводъ	<i>Փաստ</i>
Довѣренность	<i>Հաւատգիր</i>
Довѣренность по передовѣрю	<i>Վերհաւատգիր</i>
Довѣритель	<i>Հաւատուր</i>
Довѣрять	<i>Հաւատալ</i>
Договоръ	<i>Դաշինք</i>
Договоръ письменный	<i>Գրաւոր դաշինք, Դաշնագիր</i>
Договоръ словесный	<i>Բանաւոր դաշինք, Դաշնախօսք</i>
Дознаніе черезъ окольныхъ людей	<i>Հետաքննութիւն շրջանակների միջոցով</i>
Доказательство	<i>Ապացուց</i>
Документъ	<i>Դոկումենտ, Փաստագիր</i>
Долговое имущество	<i>Պարտուց գոյք</i>
Долговое обязательство	<i>Պարտաթուղթ</i>
Долговой актъ	<i>Պարտուց ակտ</i>

Долгъ

Պարուր

Долевая отвѣтствен- Բաժնակի պատասխա-
ность նառութիւն

Должникъ

Պարտապան

Должностное лицо

Պաշտօնեալ

Должность

Պաշտօն

Доля

Բաժին

Домашнее завѣщаніе

Տանու կտակ

Домашній актъ

Տանու տկա

Домашній арестъ

Տանու կալանք

Домашняя исправи-
тельная мѣра

Տնային ուղղիչ միջոց

Домовое заемное
письмо

Տանու փոխգիր

Донаситель

Իմացտու

Донасительство

Իմացտուր

Донасчикъ

Մատնիչ

Доносъ

Մատնութիւն

Հարցափորձ

Հարցափորձել

Дослѣдованіе

Լրացուցիչ քննութիւն

Досмотръ

Նայեցք

Досрочное
освобожденіе

Դարձակէտ բաւարարումն
удовлетвореніе

Достовѣрный

Արժանահաւատ

Доходъ

Եկամուտ

Драка

Կռիւ

Дробленіе иска

Հայցի մասնառումն

Дубликатъ

Կրկնակ

Духовное завѣщаніе

Կտակ

Духовный судъ

Հոգեոր դատարան

Душевная болѣзнь

Հոգեկան հիւանդութիւն

Душеприказчикъ

Կտակարար

Дѣеспособность	Գործունակութիւն
Дѣеспособность процессуальная	Դատավարական գործունակութիւն
Дѣйствіе	1.—Գործողութիւն 2.—Գործօնութիւն
Дѣлопроизводство	Գործավարութիւն
Дѣтоубійство	Մանկասպանութիւն

—о—

E.

Единовѣрецъ	Հաւատակից
Единокровный	Համահայր
Единоутробный	Համամայր
Единство	Միութիւն

—о—

Ж.

Жалоба	Գանդառ
Жалобщикъ	Գանդառաւոր

Жалованье	Ոտքիկ
Жеребій	Վիճակ
Жертвователь	Նուիրատու
Жестокость	Դաժանութիւն
Жилище	Բնակարան
Жилой	1.—Բնակելի 2.—Մարդաբնակ
Жительство	Բնակութիւն

—о—

З.

Забастовка	Գործադուլ
Заблужденіе	Մոլորութիւն
Завладѣніе	Տիրապետում
Заводчикъ	Տես Зачинщикъ
Заводъ	Գործարան
Завѣщеніе	Կտակ
Завѣщатель	Կտակարար

Завещательное распоряжение	Կտակային տնօրինութիւն
Заговоръ	Դաշտդրութիւն
Задатокъ	Հաւատչէք
Задаточная росписка	Հաւատչէքի ստացագիր
Задержание	Կալանառումն
Задельная плата	Գործավարձ
Заемное письмо	Փոխագիր
Заемщикъ	Փոխառու
Заемъ	Փոխ
Заемъ внутренний	Ներքին փոխառութիւն
Зажигательство	Այրեցողութիւն
Займодавецъ	Փոխառու
Займствование	Փոխառումն
Займствование противозаконное	Հակօրէն փոխառումն
Заказъ	Պատուէք

Закладная	Գրաւագիր
Закладная крѣпость	Գրաւի յետկար
Закладъ	Գրաւ
Заключеніе	Եզրակացութիւն
Заключеніе въ крѣпости	Բերդարգելութիւն
Заключительное слово	Եզրափակման խորք
Законная оборона	Օրինական պաշտպանութիւն
Законная сила решения	Վճիռների օրինական ուժ
Законное владѣніе	Օրինական տիրութիւն
Законность рожденія	Ծննդի օրինականութիւն
Законовѣдѣніе	Օրէնսդիտութիւն
Законодательная власть	Օրէնսդիր իշխանութիւն
Законъ	Օրէնք
Закрытие дверей засѣданія	Նիստի դռնփակումն

Залоговое свидѣтельство	Գրաւի վկայական
Залогодатель	Գրաւատու
Залогодержатель	Գրաւակալ
Залогоприниматель	Գրաւառու
Залогъ	Գրաւ
Залогъ кассационный	Բեկման գրաւական
Замѣчаніе	Նկատողութիւն
Заочное разбиран- тельство	Միականի քննութիւն
Заочное рѣшеніе	Միականի վճիռ
Запальчивость	Յասումն
Запамятованіе	Մտահանութիւն
Зapasный капиталъ	Պահեստի գրամագլուխ
Запечатанное обѣя- леніе	Կնքած յայտարութիւն
Запирательство	Լոկանք
Запрещеніе	Արգելանք

Запрещенная игра	Արգելուած խաղ
Запродажа	Նախավաճառք
Запродажная запись	Նախավաճառքի գիր
Заработка плата	Աշխատավարձ
Зараженіе	Վարակումն
Засада	Դարձն
Засвидѣтельствованіе	Վաւերացումն
Застрахованный капиталъ	Ապահովագրած գրամա- գլուխ
Засѣданіе при за- крытыхъ дверяхъ	Դոնփակ նիստ
Засѣданіе при от- крытыхъ дверяхъ	Դոնրաց նիստ
Захватчикъ	Բռնագրաւիչ
Захватъ	Բռնագրաւումն
Зачатіе ребенка	Մանկան յդացումն
Зачетъ	Փոխհաշիւ
Зачинщикъ	Վերփերիչ

Защита	Պաշտպանութիւն
Заявление	Յայլ.
Звание	Կոչումն
Здравый разсудокъ	Առողջ դատողութիւն
Землемѣръ	Հողաչափ
Земская давность	Տիրութեան վաղեմութիւն
Земское учрежденіе	Զեմստվային, Տեղավար հիմնարկ
Земство	Զեմստվօ, Տեղավարու- թիւն
Злой умыселъ	Զար գիտումն
Злостная несосто- ятельность	Զարամիտ սնանկութիւն
Золотая валюта	Ոսկի արժանիք
Золотопромышлен- никъ	Ոսկեհանն
Золотые пріиски.	Ոսկեհանք

И.

Извращение	Խեղաթիւրումն
Извѣщеніе	Ծանուցումն
Изгнаніе	Տես Высылка
Изгнаніе плода	Սաղմավանումն
Издание закона	Օրէնքի հրատարակումն
Издержки судебныя	Դատական ծախք
Измѣна	Դաւաճանութիւն
Измѣненіе иска	Հայցի փոփոխումն
Изнасилованіе	Բոնաբարութիւն
Изученіе дѣла	Գործի ուսումնասիրութիւն
Изъятіе	Հանումն
Именная акція	Անուանակիր բաժնե- թուղթ
Имущество	Գոյք
Имѣніе	Կայք
Иновѣрецъ	Այլահաւատ

Инородецъ	<i>Ալացեղ</i>
Иностранецъ	<i>Ալերկրացի</i>
Иностранный судъ	<i>Ալերկրեայ դատարան</i>
Инстанція	<i>Ինստանցիա</i>
Интервенція	<i>Տես Вступленіе въ дѣло</i>
Ипотека	<i>Հիպոթէկա</i>
Исковая давность	<i>Հայցային վաղեմութիւն</i>
Исковое прошеніе	<i>Հայցագիր</i>
Исковое требование	<i>Հայցապահանջ</i>
Искъ	<i>Հայց</i>
Исполненіе договора	<i>Դաշինքի կատարում</i>
Исполненіе приго- вора	<i>Դատավճռի կատարածում</i>
Исполненіе рѣшенія	<i>Վճռի կատարում</i>
Исполнительная власть	<i>Գործադիր իշխանութիւն</i>
Исполнительное производство	<i>Կատարողական վարութիւն</i>

Исполнительное судо- производство	<i>Կատարողական դատա- վարութիւն</i>
Исполнительный листъ	<i>Կատարողական թուղթ</i>
Исправительныя аре- стантскія отдѣлениа	<i>Ուղղիչ կալանաւորական բաժանմունքներ</i>
Исправление акта	<i>Ակտի ուղղումն</i>
Истецъ	<i>Հայցուոր</i>
Источникъ закона	<i>Օրէնքի աղբիւր</i>
Истребленіе	<i>Ոչնչացումն</i>
Истребованіе	<i>Պահանջումն</i>
Истцовская сторона	<i>Հայցաւոր կողմ</i>
Истязаніе	<i>Խոշտանդանք</i>

— о —

K.

Казенное имущество	<i>Դանձապատկան գոյք</i>
Казенное управление	<i>Դանձային վարչութիւն</i>
Казенный интересъ	<i>Դանձի շահ</i>

Казна	Դանձ
Казначей	Դանձապետ
Камера	Կամերա
Камера преданія суду	Դատի մատնող կամերա
Кандидатъ на судеб- ныя должности	Դեկնածու
Каноническое право	Կանոնական իրաւունք
Канцелярія	Դիւանատուն
Канцелярская пошлина	Դիւանատան տուրք
Капиталъ	Կապիտալ, Դրամագույն
Карантинъ	Կարանտին
Карательная власть	Պատժիչ իշխանութիւն
Карательная мѣра	Պատժական միջոց
Карауль	Պահակ
Кассационная жалоба	Բեկման գանդատ
Кассационное рѣшеніе	Բեկիչ վճիռ

Кассационный поводъ	Բեկման առիթ
Кассационный протестъ	Բեկման բողոք
Кассация	Բեկումն
Каторга	Տաժանք
Каторжныя работы	Տաժանակիր աշխատանք
Квалификація	Որակումն
Квалифицированное преступленіе	Որակեալ յանցանք
Квартира	Կացարան
Квартирный налогъ	Կացարանային հարկ
Квитанція	Սնդորրագիր
Кефинный актъ	Քեաբինի ակտ
Кладъ	Գանձ
Кладь	Ծանրոց
Клевета	Զրոյարատութիւն
Клубъ	Կլուբ, Ակումբ

Книги торговые	<i>Առևտրական մատեաններ</i>
Коллекциальный	<i>Կոլեցիալնի</i>
Коллективный договоръ	<i>Հաւաքական դաշինք</i>
Коллизія	<i>Կոլլիզիա, Բախում</i>
Колонія для несовер- шеннолѣтнихъ пре- ступниковъ	<i>Անչափահաս յանցաւորնե- րի գաղոթ</i>
Коммерческій судъ	<i>Առևտրական դատարան</i>
Комиссіонеръ	<i>Կոմիսիոնէր</i>
Комиссіонное воз- награжденіе	<i>Կոմիսիայի վարձ</i>
Комиссіонный до- говоръ	<i>Կոմիսիայի դաշինք</i>
Комиссія торговая	<i>Առևտրական կոմիսիա</i>
Комиттентъ	<i>Կոմիտէնտ</i>
Компания	<i>Տես Տоварищество</i>
Конвенція	<i>Կոնվենցիա</i>
Конкурсная масса	<i>Կոնկուրսային գանգումած</i>

Конкурсное управление	<i>Կոնկուրսային վարչութիւն</i>
Конкурсъ	<i>Կոնկուրս</i>
Конокрадство	<i>Չիազողութիւն</i>
Коносаментъ	<i>Կոնոսամէնտ</i>
Консисторія	<i>Կոնսիստօրիա</i>
Консульская юрисдикція	<i>Հիւպատոսական իրաւասութիւն</i>
Контокуррентъ	<i>Համընթացիկ հաշիւ</i>
Контора	<i>Գրանենեակ</i>
Контрабанда	<i>1.՝ Մաքսանենգութիւն 2.՝ Մաքսանենգոնք</i>
Контрагентъ	<i>Դաշնորդ</i>
Контрактъ	<i>Տես Договоръ</i>
Конрафакція	<i>Գրանենգութիւն</i>
Конфискація	<i>Գրաւումն ի գանձ</i>
Копія	<i>Պատճէն</i>
Корабельная крѣпость	<i>Նավի յետկար</i>

Корабельщикъ	<i>Նաւակար</i>
Корчемство	<i>Բաժանենգութիւն</i>
Корыстная цѣль	<i>Շահալսուրական նպատակ</i>
Кощунство	<i>Արքանարգանք</i>
Краденая вещь	<i>Գողօնք</i>
